

գլխւոյ յաւիտութեան շնորհիւ է, որ մնում են հեթանոսական հատ ու կտոր նշմարներ մինչև մեր օրերը, թէև միշտ քողարկուած:

Այժմ անցնենք աւելի ընդարձակօրէն ցոյց տալու վիճակի սովորութեան մէջ եղած հեթանոսական տարրերը, որոնք այստեղ, քան ուրիշ տեղական սովորութիւնների մէջ, այնպէս առատութեամբ չաղ է տուած:

(Շարունակելի).



ԳՐԱԽՅՈՍՈՒԹԻՒՆ

Das armenische Hymnarium, von Nerses Ter-Mikaëlian.—Հայկական Շարական. հեղ. Ներսէս Տ. Միքայէլեան, Leipzig, 1905.

Հեղինակը ըստ իւր յառաջաբանի նպատակ է ունեցել պարզել՝ ա. Հայ շարականը գիտական հետազոտութեան համար ինչպիսի պրօբլեմներ է ներկայացնում: Բ. Ի՞նչ հնութիւն ունի նա, գ. Թէ եկեղեցական աւանդութիւնը որ շարականը որ հեղինակին է վերագրում և թէ արդեօք որչափով պատմական է այդ աւանդութիւնը:

Ամենից առաջ նկատենք, որ հարցերի այսպիսի դասաւորութիւնը տրամաբանական չէ, որովհետև առաջին հարցի մէջ ամփոփուած են ոչ միայն հետեւեալ երկուսը, այլ և շատ ուրիշներ, որոնց պատասխանը մենք իրաւունք ենք ստանում որոնելու վերոյիշեալ ուսումնասիրութեան մէջ: Բայց շարունակութեան մէջ հեղինակը յայտնում է, որ նպատակ չէ ունեցել Հայ շարականների ծագումը և նրանց փոխադարձ յարաբերութիւնը դէպի հարևան երկիրների նման երևոյթները հետախուզել, բայց կարևոր է համարել զրել նաև մի յաւելուած Շնորհալուց անմիջապէս յետոյ գոյութիւն ունեցող տոմարի մասին: Այս ծրարգրի համաձայն—եթէ կարելի է մի ծրագիր գտնել—այս գիրքը բաժանուած է հետեւեալ զուխների. Ա. Ներկայ

շարականը. Բ. Կանոնի պատմութիւնը. Գ. Հեղինակները և վերջապէս վերոյիշեալ յաւելուածը:

Այս աշխատութեան մէջ, որը բաղկացած է 105 էջերից, հեղինակը եկել է հետեւեալ եզրակացութիւններին. ա. Ներկայ շարականի խմբագրութիւնը ամենավաղ ժ.Գ. դարու վերջին երրորդին տեղի է ունեցել. բ. Օրհնութեան շարականները չեն ներկայացնում մի զրական արտադրութիւն. գ. Շարականի կարգաւորութիւնը ոչ մի հայեցակէտով չի եղել և չի կարելի պարզել. դ. Շարականները կանոնի են ենթարկուած, որպէս զի ուրիշ նոր շարականներ չընդունուին. ե. Ազգային սուրբերը առանձին ուշադրութեան են արժանացել. զ. Մենք չգիտենք՝ թէ ե—ժ.Ֆ. դարերում ինչ ծաւալ կամ բովանդակութիւն ունէր շարականը. է. Շնորհալիով սկսուում է մի նոր շրջան շարականի համար. ը. Շարակնոցի կանոնական դարձնելը մայրենի եկեղեցու պաշտպանութեան մի փորձ է կաթոլիկների ոտնձգութեան դէմ ժ.Գ. և ժ.Գ. դարերում: Թ. Գանձակեցու հաղորդածը, որի համաձայն Ներսէս Գ. (640—661) ձոն գիտական վարդապետի ձեռքով մի կանոնական շարակնոց է գլուխ բերում պատմական չէ: Ժ. Մենք չգիտենք՝ թէ Շնորհալուց առաջ զխաւորապէս սաղմոսներ կամ սաղմոսանման երգերն էին եկեղեցու գործածութեան մէջ, թէ ինքնուրոյն եկեղեցական երգեր: ԺԱ. Շնորհալուց առաջ շարականների հեղինակների մասին ոչ ոք ոչինչ չի աւանդել, իսկ մեզ հասած հեղինակների ցանկերը մանաւանդ նախաներսիսեան ժամանակի մասին հակասում են միմեանց: ԺԲ. Հեղինակների մասին մեր ստացած տեղեկութիւններն ու ցանկերը կապ ունեն շարականի կանոնական դառնալու հետ և դրանից յետոյ են առաջ եկել: Տ. Նոյն հեղ. Pro. Dr. Finck und seine Kritik Etsch. 1908. էջ 8—10:

Այս եզրակացութիւնները, կամ թէզիսները, ինչպէս հեղինակն է անուանում, ցան ու ցրիւ գիտողութիւնների տպաւորութիւն են թողնում մեզ վրայ, իսկ դորան համոզուելու համար, բաւական է համեմատել Դ. և Ը. կտորները միմեանց հետ:

Մի ուրիշ հանդամանք բոլորովին տարօրինակ է. հեղինակը փորձում է հայոց եկեղեցւոյ շարականի և զարգացման կանոնական դառնալու պատմութիւնը դրել առանց յունական և ասորական եկեղեցիների շարականների կազմութիւնը և նրանց փոխադարձ ազդեցութիւնը ի նկատի առնելու և հէնց այս պատճառով այս աշխատութիւնը շատ բան է կորցնում: Մենք դեռ տարիներ առաջ ուրիշների հետ պնդել ենք, որ առանց նոյնանման երևոյթների ուսումնասիրութեան յոյն և ասորի եկեղեցիներում, անկարելի է այսպիսի գործի ձեռնարկել: Եւ այժմ էլ մենք հարցնում ենք հեղինակին. ի՞նչպիսի բարեխղճութեամբ նա դրել է օրինակ ժ. Թէղլիսը—Մենք չըզիտենք Թէ Շնորհալուց առաջ սաղմոսներ կամ սաղմոսանման երգերն են զխաւորապէս գործածութեան մէջ եղել: Թէ ինքնուրոյն երգեր: Չէ որ այս հարցին պատասխանելու համար պէտք էր դիմել հարեան եկեղեցիներին և հետքերը ունենալ թէ այնտեղ ի՞նչպէս է առաջ դրնացել այդ դարգացումը: Պէտք է պատմական լայն հայեացք ունենալ և յիշել, որ մեր կուլտուրան և հետեւապէս հայ եկեղեցին կապ ունի հարեան երկրների կուլտուրայի հետ և շատ անգամ նրանց դարգացումով պայմանաւորուած: Չպէտք է մեր պատմութեան մէջ յառաջ եկած կուլտուրական երևոյթները անտրոյս և կղզիացած նկատենք, ոյլ ընդհանուր կապակցութեան մէջ փորձենք ըմբռնել¹⁾: Պէտք է վերջապէս վերջ եկած համարել բանասիրական այն տեսակ աշխատանքների, որոնք բաւականանում են մի երևոյթ ուսումնասիրելիս, մեր պատմագիրները թերթել և նոցանից հանած տեղեկութիւնները կցկցելով կամ բաժանելով կամ ջրելով տեղի անտեղի դա-

1) Յարմար առիթ եմ համարում յայտնելու, որ այս գրքի լոյս աւանդելուց երկու տարի առաջ պ. Մանուկ Աբեղեանը շարականների ծագման և նոցա կանոնի ենթադրուելու առթիւ դատախօսել է Գ. ձեմարանի լտարաններում վերայիշեալ լայն հայեցակէտով, դժբախտաբար յարգելի բանասէրը մինչև այժմ իւր ուսումնասիրութիւնները չի հրատարակել:

տողութիւններ տալ և այդ ձևով մի ուսումնասիրութիւն առաջ բերել: Այս ձևով են աշխատել Զարբանալեանը և ուրիշները: Բայց մենք իրաւունք ունէինք սպասելու, որ Տ. Միքայէլեանը այդպէս չվարուէր: Իսկ որպէս զի համոզուենք՝ թէ ինչքան վայրի վերոյ են նորա դատողութիւնները, բաւական է յիշել, որ նա Գանձակեցու վստահելի տեղեկութիւնը, թէ ներսէս Գ-ի ժամանակ և նորա հրամանով կարգաւորուեցան և կանոնի ենթարկուեցան շարականները, որով առաջ եկաւ այսպէս կոչուած «ձոնընտիրը», ոչ պատմական է համարում պատճառաբանելով՝ թէ ինչպէս կարող էին կաթողիկոսի ներկայութեան եկեղեցում ժամասացութեան և շարականների երգեցողութեան մէջ շփոթութիւններ պատահել, որի համար կաթողիկոսը հրամայած լինի այդ խնդիրը կամ ժողովով և կամ մի անհատի միջոցով կարգաւորել: Կարծես թէ մինչև այսօր էր երբ կանոնի ենթարկուած և տպագրուած շարական ունենք, կաթողիկոսի ներկայութեան հէնց էջմիածնում այդպիսի շփոթութիւններ չեն պատահում: Եւ եթէ այժմ այսպէս, ապա որչափ ևս առաւել այն ժամանակ, երբ շարականների թիւը որոշ և կարգը հաստատ չէր, երբ կրօնական ոգին ղեռ վառ էր, և իւրաքանչիւր վարդապետ իւր իրաւունք կհամարէր նոր շարականներ յօրինել և եկեղեցում երգել տալ: Ուրեմն ի՞նչ կարող է այստեղ անհաւանական համարուել, մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ Բիւզանդիոնում նման փորձեր մի քանի տասնեակ տարիներով աւելի վաղ էին կատարուել, և հայ բարձրաստիճան հոգեւորականութիւնը՝ ուսած լինելով մեծաւ մասամբ Բիւզանդիոնում՝ պէտք է որ այդ կարգերը այնտեղ տեսած և Հայաստանում ևս իրականացնել փորձէր: Բայց եթէ հեղինակը Գանձակեցու այդ տեղեկութիւնը պատահական չի համարում, երևի, դորա պատճառն այն է, որ նա ուզում է անպատճառ ապացուցանել, որ շարականի ամփոփումը և կանոնական դառնալը հայոց եկեղեցու համար մի ինքնապաշտպանութեան աքտ էր Ժ. Գ. դարի կաթողիկոսնապետութիւնների դէմ: Մենք

չենք ժխտում, որ այս կէտն էլ կարող էր դեր խաղալ, բայց ուրիշների հետ՝ մենք էլ կարող ենք մատնանիշ անել այն ընդհանուր պատմական երևոյթի վրայ, որ քրիստոնէական կրօնական ոգևորութիւնը, որի արտայայտութիւնը եկեղեցական նոր նոր շարականներ երևան գալն է, ունեցել է իւր զարգացման և անկման ֆազերը. որ ժ.Գ. և ժ.Գ. դարերում այդ ոգևորութիւնը սկսում է սառել և քարանալ: Բայց եթէ նոյն իսկ հեղինակի հետ շարականների կանոնի ենթարկելը ինքնապաշտպանութեան արտահայտութիւն է, ապա ի՞նչու չափաւոր կապով կարող ենք ըմբռնել, թէ ինչո՞ւ Ներսէս Գ-ն ևս Դուինի Ե. Ժողովում կարիք ունէր այդ հարցն արծարծելու, քանի որ հայոց եկեղեցուն սպառնում էին մի կողմից յոյները, իսկ միւս կողմից մոնոֆիզիտ աղանդաւորները: Որ Գանձակեցուց առաջ «Ճոնընտիր»-ի մասին ոչ ոք չի յիշել, դա բացատրուում է նրանով, որ այդ խնդիրների մասին սկզբներում այդքան ջերմ հետաքրքրութիւն չկար, ինչպէս Գանձակեցու դարում, որ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս, թէ մեր ո՞ր հայրապետը ի՞նչ շարական է երգել, իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ իբր թէ Գանձակեցու այդ տեղեկութիւնների մէջ հակասութիւններ կան, ես էլ պրօֆ. Ֆինքի հետ համարում եմ ծիծաղելի: Սխալ է կարծել՝ թէ աւելի դիտական գործ արած կլինենք և աւելի ազատամիտ կհամարուենք, եթէ հնութիւնից մեզ հասած արժանահաւատ տեղեկութիւններն անգամ հապճեպով սուտ կամ սխալ համարենք և ամէն մի երևոյթ յետագայ դարի գործ: Այս ձևով է վարուել հեղինակը, որի պատճառով նորա գիրքը կարգալիս մենք այն տպաւորութիւն ենք ստանում, որ շարականը նորահալու ժամանակ գետնից բուսաւ:

Կարծում եմ, որ հեղինակն էլ համաձայնում է, իւր այս գործը մի նախապատրաստական աշխատանք համարելու և որ իւր թէզիսները միայն մանր դիտողութիւնների ընդթ են կրում: Այս այսպէս լինելով ի՞նչպէս է, որ հեղինակը իւր աշխատութեան 103 էջում, ընդօրինակե-

լով պրօֆէսօրական դասախօսութիւնների ոճը՝ կարեւոր է համարում հրահանգներ տալ և խորատներ կարգալ՝ թէ այդ խնդրի ուսումնասիրութիւնը ի՞նչ մեթոտով պէտք է առաջ տանել: Աւելի լաւ է մի քիչ դործ կատարել, քան հրահանգներ տալ: Քարոզչի կոչումը պիտի մոռանար նա իւր այդ փոքրիկ աշխատութեան մէջ:

Տ. Միքայէլեանի աշխատութիւնը մի քիչ լուրջ քննութեան է ենթարկել պրօֆ. Ֆինք «Göttingener gelehrte Anzeigen» 1906 թ. № 3: Նորա այս քննադատութեանը հեղինակը կարեւոր է համարել առանձին «Prof. D. F. N. Finck und seine Kritik über das armenische Hymnarium, 1908 Etschmiatsin» գրքոյկով պատասխանել, որը անհամոզեցուցիչ է և թոյլ, բացի վերջին կէտից: Կարծում եմ որ Տ. Միքայէլեանը իւր անտիքրիտիքի մէջ հիմնովին կերպով ապացուցել է, որ ինքը իրաւունք ունէր զգուշացնելու այն բոլորին, որոնք կուզենան օգտուել Աւետիքեանի շարականների լատինական թարգմանութիւնից, որովհետեւ վերջինս կաթոլիկ հայեցակէտով առաջնորդուելով՝ բնագիրը շատ տեղ խեղաթիւրած կարող է լինել:

Այսպիսով մենք նորա գրքի մասին գալիս ենք հետեւեալ եզրակացութեան. դժուար է այս աշխատութիւնը ուսումնասիրութիւն համարել և, եթէ ընթերցողը հեղինակի սեփական քննութիւն կամ ուսումնասիրութիւն համարած կտորները դուրս ձգի, ոչինչ չի կորցնի. իսկ եթէ այս գործի իրրեւ շարականի պատմութեան վերաբերեալ նիւթերի մասնակի հաւաքածոյի վրայ նայենք, այն ժամանակ պէտք է առանձին գովասանքի արժանի համարենք հեղինակի եռանդը:

Մ. Խոսիկեան



ՆԻՔՍԷՍ ՔԶՆՅ. ՀԵՐԹԵՆՅԱՆԻ՝ Ամուսնութիւնը ազգերի կեանքում, եկեղեցին ամուսնական խնդրում. 1908. Նոր-Նախիջեւան:

60 կող.

Հայք հեղինակը իր երկասիրութիւնը առաջարկում է «Երբե նիւթ խորհրդածութեան պրակի խորհրդի բարեփոխութեան»: